



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



**ERASMUS+ CBHE PROJECT # 585760-EPP-1-2017-1-AM-
EPPKA2-CBHE-JP**

**“Change in Classroom: Promoting Innovative Teaching &
Learning to Enhance Student Learning Experience in Eastern
Partnership Countries”, PRINTeL**

ՉԵԿՈՒՅՑ

**ERASMUS+ PRINTeL նախագծի մասնակից ԵՊՀ
դասախոսների կողմից ուսանողներին դասավանդման
մեթոդների վերաբերյալ հարցումների արդյունքների
ուսումնասիրության**

Երևան 2020

Բովանդակություն

Ներածություն. ընդհանուր տեղեկություններ:	3
Հարցումների արդյունքների վերլուծությունը:	4
Եզրակացություն:	15
Հետագա անելիքների ուղեցուցիչներ:	17

Ներածություն. ընդհանուր տեղեկություններ:

Սույն զեկույցը կազմվել է ERASMUS+ ծրագրի PRINTeL նախագծի երկրորդ աշխատանքային փաթեթով նախատեսված գործողությունների շրջանակում: Այն բովանդակում է PRINTeL նախագծի գործընկեր ԵՄ հինգ բուհերում (Գրացի տեխնոլոգիական, Լյուվենի կաթոլիկ, Լինշյոպինգի, Բարսելոնի, Պորտուգի համալսարաններ) վերապատրաստված ԵՊՀ դասախոսների՝ այդ վերապատրաստումների շնորհիվ յուրացրած նոր մեթոդներով ու մոտեցումներով ուսանողներին դասավանդելու վերաբերյալ հարցումների¹ արդյունքների ուսումնասիրությունը:

Չեկույցի նպատակներն են նշված հարցումների արդյունքների վերլուծության միջոցով **գնահատել** նախագծի մասնակից ԵՊՀ դասախոսների կողմից վերջին ուստարում կիրառած դասավանդման մեթոդների և մոտեցումների արդյունավետությունը կրթության որակի, մատչելիության ու հասանելիության տեսանկյուններից, **վերհանել** ուսանողների վերաբերմունքն այս հարցում, **վերհանել** դասավանդման և ուսումնառության ակտիվության, համագործակցայնության, թվային տեխնոլոգիաների կիրառման աստիճանը, ինչպես նաև **ուղեցույց** հետագա անելիքները՝ դասախոսների դասավանդման կոնվենցիոնալ ու թվային հմտությունների զարգացման, ձեռք բերված փորձի փոխանակման առումներով: Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերհանել դասընթացներում ուսանողների ներգրավվածության մակարդակը,
- բացահայտել վերապատրաստված դասախոսների կողմից կիրառված դասավանդման և ուսումնառության մեթոդների դերը ուսանողների ուսումնառությունը խթանելու գործում,
- պարզել դասընթացներին ուսանողների մասնակցությունը, ակտիվ ներգրավվածությունը դասախոսների կողմից խթանելու հանգամանքը,
- վերհանել դասավանդման մեջ դասախոսների կողմից ակտիվ և նորարարական մեթոդներ կիրառելու հաճախակիության աստիճանը, ինչպես նաև ուսանողների բավարարվածությունն այդ հարցում,
- բացահայտել ուսանողների բավարարվածությունը դասախոսների հետ հաղորդակցության գործընթացի արդյունավետությունից,
- պարզել վերապատրաստված դասախոսների վարած դասընթացների արդյունքում ուսանողների մոտ խմբային աշխատանքի և համագործակցային կարողություններ ձեռք բերելու հանգամանքը,

¹ Հարցումներն անց են կացրել նախագծի շրջանակներում վերապատրաստված մասնակից ԵՊՀ 16 դասախոսներից 10-ը: Նրանք են՝ Աննա Ալեքսանյան, Մարինա Յարոլբյան, Լիլիթ Սարգսյան, Սիլվա Պետրոսյան, Նվարդ Մելքոնյան, Լիանա Գաբրիելյան, Սերոբ Խաչատրյան, Կարեն Թռչունյան, Գոռ Ալեքսանյան, Մենուա Սողոմոնյան:

- հասկանալ ուսանողների նախապատվությունները ուսումնառության ակտիվ և նորարարական մեթոդների օգտակարության հարցում՝ դասընթացների մատուցվող կողմից յուրացնելու տեսանկյունից,
- պարզել ուսանողների ընդհանուր վերաբերմունքը վերապատրաստված դասախոսների կողմից ակտիվ ու նորարարական մեթոդներով ու մոտեցումներով դասավանդման հարցում, ինչպես նաև նրանց ցանկությունը մյուս դասախոսների կողմից ևս նշված մեթոդներն ու մոտեցումները կիրառելու հարցում,
- հավաքագրել և ընդհանրացնել ուսանողների առաջարկությունները դասընթացներն առավել արդյունավետ, ակտիվ և հետաքրքիր դարձնելու տեսանկյունից:


Վերոնշյալ խնդիրները բովանդակող հարցումների հարցաշարը մշակվել է նշված դասախոսների կողմից՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի բովանդակային, մեթոդական և տեխնիկական աջակցությամբ: Հարցումներն անց են կացվել 2020թ. մարտ-ապրիլ ամիսներին, առցանց եղանակով, նշված դասախոսների կողմից դասավանդվող 25 դասընթացների մասնակից ուսանողների շրջանում: Դասընթացներից 19-ը բակալավրի, 6-ը՝ մագիստրոսական դասընթացներ են: Դասընթացներից 2-ը բնագիտական մասնագիտությունների ծրագրերի դասընթացներ են, 23-ը՝ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների: Հարցումներին մասնակցել է 362 ուսանող, որոնցից 307-ը բակալավրի, 55-ը՝ մագիստրոսական ծրագրի ուսանողներ են: Հարցումներին մասնակցած ուսանողներից 9-ը բնագիտական մասնագիտությունների ծրագրերում են ուսումնառել, 353-ը՝ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ծրագրերում:

Հարցումների արդյունքների վերլուծությունը:

Հարցումները ցույց տվեցին, որ բոլոր 10 դասախոսներին էլ հաջողվել է իրենց դասընթացներում ապահովել ուսանողների ներգրավվածության և ակտիվ մասնակցության անհրաժեշտ մակարդակը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ **«ինչպե՞ս էր դասընթացն ընթանում ընդհանուր առմամբ»** հարցին հարցված ուսանողների ճշող մեծամասնությունը՝ 93,4%-ը, պատասխանել է, որ հավասարապես ապահովվել է և՛ դասախոսի ակտիվ դերը, և՛ ուսանողների ներգրավումը (16 ուսանող (հարցվածների 4,4%) նշել է «առավելապես դասախոսի ակտիվությամբ և ուսանողների նվազագույն ներգրավմամբ» պատասխանը: 5 ուսանող (1,4%) նշել է «դասախոսի աննշան մասնակցությամբ և ուսանողների առավելագույն ներգրավմամբ», իսկ 3 ուսանող (0,8%)՝ «հիմնականում ուսանողների ակտիվությամբ» պատասխանը. տե՛ս գծապատկեր 1.): Ընդ որում, դասախոսի և ուսանողների հավասարաչափ ակտիվությունը վերաբերում է ոչ


միայն բոլոր 25 դասընթացներին մասնակցած ուսանողների ընդհանրացված կարծիքին, այլև այդ դասընթացներից յուրաքանչյուրի դեպքում է ակտիվության հավասարաչափ բաշխվածության մասին պնդումը գերակայել: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ի դեմս նշված դասընթացների, զգալիորեն բարձրացել է դասավանդման ուսանողակենտրոնության աստիճանը, ինչը ողջունվում է ուսանողների կողմից:

Գծապատկեր 1.




Հատկանշական է, որ վերապատրաստված դասախոսների կողմից յուրացված մեթոդների՝ դասավանդման պրոցեսում կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով են դասախոսները խրախուսում ուսանողների մասնակցությունն ու ակտիվ ներգրավվածությունը: Այսինքն՝ ոչ միայն նոր ձեռք բերված մոտեցումներն ու մեթոդներն են ինքնըստինքյան խթանում ուսանողների մասնակցությունը, այլ նաև դասախոսներն են սեփական նախաձեռնողականությամբ ու խանդավառությամբ ներգրավում դասարանին դասապրոցեսի մեջ: Այդ է փաստում հարցված ուսանողների կողմից գրեթե միաձայն արտահայտված համաձայնությունն այն հարցում, որ դասախոսները խրախուսել են նրանց ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը դասերին (**«Դասընթացի ընթացքում ուսանողների մասնակցությունը և ներգրավվածությունը/ակտիվությունը խրախուսվել են»** պնդմանը լիովին համաձայն է եղել 301 ուսանող (հարցվածների 83,1%), համաձայն է եղել 40 ուսանող (11%), մասամբ համաձայն է եղել 13 ուսանող (3,6%), համաձայն չի եղել 1 ուսանող (0,3%), բոլորովին համաձայն չի եղել 4 ուսանող (1,1%), դժվարացել է պատասխանել 3 ուսանող (0,8%). տե՛ս գծապատկեր 2.:

Գծապատկեր 2.



Կարևոր է արձանագրել, որ դասախոսների կողմից դասավանդման և ուսումնառության ակտիվ և նորարարական մոտեցումների ու մեթոդների, այդ թվում թվային գործիքների կիրառումը բարենպաստ ազդեցություն է ունենում ուսանողների մոտիվացիայի բարձրացման վրա, ինչպես նաև դյուրացնում է դասախոսի կողմից մատուցվող նյութի ընկալումը, դրա վերարտադրությունը կամ կիրառումը տարբեր տեսակի առաջադրանքներում: Ակտիվ, համակցված, խաղայնացված մոտեցումներով դասերը վարելիս դասախոսի և ուսանողի միջև առկա կարգավիճակային-դերային առանձնահատկություններով պայմանավորված սահմանափակումներն էապես կրճատվում են, և նրանք սկսում են համագործակցել: Արդյունքում դասախոսը զուտ ինֆորմացիա փոխանցելուց զատ օգնում է ուսանողին ստեղծել գիտելիք՝ այդ թվում ներկայիս երիտասարդությանը (և ոչ միայն) այդքան հոգեհարազատ դարձած, նրա կենցաղի անբաժան մասը հանդիսացող բջջային հեռախոսների օգտագործմամբ: Պատահական չէ, որ հարցված ուսանողների 88%-ը գտել է, որ այդ մոտեցումներն ու մեթոդները մոտիվացրել են իրենց ու խթանել ուսումնառությունը (**«Դասընթացի ընթացքում կիրառված դասավանդման և ուսումնառության մեթոդները հետաքրքրություն են առաջացրել թեմաների նկատմամբ և խթանել իմ ուսումնառությունը»** պնդմանը լիովին համաձայն է եղել 250 ուսանող (հարցվածների 69,1%), համաձայն է եղել 68 ուսանող (18,8%), մասամբ համաձայն է եղել 30 ուսանող (8,3%), համաձայն չի եղել 5 ուսանող (1,4%), բոլորովին համաձայն չի եղել 7 ուսանող (1,9%), դժվարացել է պատասխանել 2 ուսանող (0,6%). տե՛ս գծապատկեր 3.):

Գծապատկեր 3.




Այս ամենը հնարավոր է դառնում դասարանում² դասախոսի դերի, գործառույթների, մոտեցումների որոշակի վերանայման պարագայում: Ինչպես նշեցինք, ակտիվ, համագործակցային ուսումնառումը զուգորդվում է դասարանում դասախոսի և ուսանողների միջև հարաբերությունների վերափոխմամբ, երբ մեծանում ու ինտենսիվանում է հաղորդակցությունն ինչպես դասախոսի և ուսանողների, այնպես էլ իրենց՝ ուսանողների միջև: Ակտիվ ու անկաշկանդ հաղորդակցությունը ուսումնառությունը խթանող մեթոդների ու տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման կարևոր նախապայմանն է: Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ վերը նշված 25 դասընթացների պարագայում էլ դասախոսների և ուսանողների միջև հաղորդակցությունը եղել է արդյունավետ, ինչի վերաբերյալ հարցված ուսանողների շրջանում գրանցվել է բավարարվածության բավական բարձր աստիճան: Այսպես, հարցվածների ավելի քան 82%-ը բարձ է գնահատել դասախոս-ուսանող հաղորդակցության գործընթացի արդյունավետությունը (**«5 բալանոց սանդղակով ինչպե՞ս կգնահատեիք դասախոսի և լսարանի միջև հաղորդակցության գործընթացի արդյունավետությունը (5՝ ամենաբարձր գնահատականն է, 1՝ ամենացածրը)»** հարցին ամենաբարձր գնահատականը տվել է 271 ուսանող (74,9%), «4» գնահատականն է տվել 63 ուսանող (17,4%), 21 ուսանող (5,8%) գնահատել է «3», 3 ուսանող (0,8%)՝ «2» և 2 ուսանող (0,6%) տվել է «1» գնահատականը: Եվս 2 ուսանող (0,6%) դժվարացել է պատասխանել

² Ցանկանում ենք ընդգծել, որ «դասարան» եզրույթն առավել ճիշտ է արտացոլում ակտիվ և համագործակցային ուսումնառության երևույթը, քան բուհերում առավել տարածված «լսարանը»: «Լսարանում» ուսանողն ավելի շատ լսողի դերում է, տեղի է ունենում գիտելիքի պասիվ փոխանցում դասախոսից ուսանողին, մինչդեռ «դասարանում» ուսանողը սովորում է աշխատանք կատարելով (learning by doing), ուստի գիտելիքի փոխանցումն առավել ակտիվ է ընթանում: Ասվածն իհարկե բացարձականացում չի ենթադրում և չի նսեմացնում ունկնդիրների մեծ լսարանով իրականացվող դասախոսությունների դերը փորձառու դասախոսների կողմից:


հարցին. տե՛ս գծապատկեր 4.): Հարկ է նշել, որ դասերի ժամանակ դասախոսների և ուսանողների միջև հաղորդակցության արդյունավետությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև դասասենյակում ուսանողների որոշակի թվով: Վերը նշված 25 դասընթացների մի մասն անցել է բազմամարդ դասասենյակներում, ինչը, բնականաբար, բարդացնում է դասավանդողի ինդիը քննարկումներ, խմբային աշխատանքներ և ակտիվ ու համագործակցային բաղադրիչով այլ մեթոդներ արդյունավետ կիրառելու գործում:

Գծապատկեր 4.




Այն հանգամանքը, որ բարձր է եղել հարցված ուսանողների բավարարվածության մակարդակը դասախոսի կողմից դասերի վարման ակտիվ և նորարարական մոտեցումների կիրառումից (**«5 բալանոց սանդղակով ինչպե՛ս կգնահատեիք դասախոսի կողմից դասերի վարման ակտիվ և նորարարական մոտեցումների կիրառումը (5՝ ամենաբարձր գնահատականն է, 1՝ ամենացածրը)»** հարցին ամենաբարձր գնահատականը տվել է 304 ուսանող (84%), «4» գնահատականն է տվել 43 ուսանող (11,9%), 10 ուսանող (2,8%) գնահատել է «3», 3 ուսանող (0,8%)՝ «2» և 1 ուսանող (0,3%) տվել է «1» գնահատականը: Եվս 1 ուսանող (0,3%) դժվարացել է պատասխանել հարցին տե՛ս գծապատկեր 5.), վկայում է վերապատրաստումների տված բարձր արդյունքների մասին:

Գծապատկեր 5.



Այս դատողության ճշմարտացիությունն ավելի է ամրապնդվում՝ հաշվի առնելով, որ ուսանողները նշում են, որ դասավանդման և ուսումնառության ակտիվ և նորարարական մեթոդները բավական հաճախ են կիրառվել (**«Որքա՞ն հաճախ են դասընթացի ընթացքում օգտագործվել դասավանդման և ուսումնառության ակտիվ և նորարարական մեթոդներ»** հարցին «միշտ» պատասխանն է տվել 131 ուսանող (հարցվածների 36,2%), «հաճախ» պատասխանել է 197 ուսանող (54,4%), «հազվադեպ» պատասխանել է 23 ուսանող (6,4%), «երբեք»՝ 4 ուսանող (1,1%), դժվարացել է պատասխանել 7 ուսանող (1,9%). տե՛ս գծապատկեր 6.):

Գծապատկեր 6.




Հարկ է նկատել, որ ակտիվ և նորարարական մեթոդների կիրառման հաճախակիության վերաբերյալ ուսանողների տված «միշտ» (36,2%) և «հաճախ» (54,4%) գնահատականների այս տեսակարար կշիռները մոտավորապես նույն համամասնությամբ առկա են հատկապես բազմամարդ խմբեր ունեցող յուրաքանչյուր դասախոսի մոտ առանձին առանձին: Սա ցույց է տալիս, որ ոչ թե դասախոսների մի մասը միշտ է կիրառել նշված մեթոդները, իսկ մյուս մասը՝ հաճախ, այլ պարզապես ուսանողների կարծիքներն ու ընկալումներն են տարբերվել հաճախակիության «միշտ» կամ «հաճախ» բնորոշումների վերաբերյալ: Այդքանով հանդերձ պետք է շեշտել, որ «հաճախ» ձևակերպումն ավելի մոտ է իրականությանը, ինչը երևում է նաև հարցման արդյունքներից, և դա բնական է: Այստեղ կարող է հարց ծագել նաև առ այն, թե հաճախակիության ի՞նչ աստիճան են վերագրում ուսանողները «հաճախ» ձևակերպմանը: Ակնհայտ է նաև, որ ակտիվ և նորարարական շատ մոտեցումների ու մեթոդների կիրառումը դասերին չի կարող ունենալ ցանկալի մակարդակը առնվազն երկու պատճառով: Նախ՝ շատ դասախոսներ դասավանդում են բազմամարդ կուրսերի, և նրանց ուսումնական բեռնվածությունն արտահայտող փաստաթղթերում է դա ամրագրվում: Բազմամարդ դասարաններում, ինչպես նշեցինք, բարդանում է հաղորդակցության հարցը, ուստիև դժվարանում է ակտիվ և համագործակցային դասավանդման շատ մեթոդների հաճախ կիրառումը: Երկրորդ պատճառը Համալսարանի դասախոսների բավական մեծ ուսումնական բեռնվածությունն է: Շաբաթական վեց, յոթ և նույնիսկ մինչև տասն անգամ լսարան մուտք գործող դասախոսից անհնար է ակնկալել այդքան մեծ ծավալի աշխատանք, որը կպահանջի ակտիվ ու համագործակցային բաղադրիչով մշտապես դասավանդման նախապատրաստություն և կազմակերպում:

Հարցումները ցույց են տվել, որ ուսանողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դասավանդման և ուսումնառության այն մոտեցումների և մեթոդների նկատմամբ, որոնք ենթադրում են խմբային աշխատանք, համագործակցություն: Պատահական չէ, որ դասավանդվող նյութը յուրացնելու համար առաջարկված մեթոդների ցանկից ուսանողները նախապատվությունը տվել են խմբային քննարկում-մտազրոհներին, խմբային նախագծերին ու բանավեճերին (**«Ուսումնառության ակտիվ և նորարարական ո՞ր մեթոդներն են առավել օգտակար՝ նյութը յուրացնելու համար»** հարցին պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ: Առցանց սեմինար-քննարկումները կարևորել է 133 ուսանող (36,7%), խմբային քննարկում-մտազրոհները՝ 230 ուսանող (63,5%), խմբային քննարկում-մտազրոհներ՝ բջջային հեռախոսի կիրառմամբ նախընտրել է 65 ուսանող (18%), անհատական նախագծերը կարևոր է համարել 127 ուսանող (35,1%), խմբային նախագծերը՝ 222 ուսանող (61,3%), անհատական հարցումներ/աշխատանքներ մեթոդն օգտակար է համարել 102 ուսանող (28,2%), անհատական հարցումներ/աշխատանքներ՝ բջջային հեռախոսների կիրառմամբ

մեթոդը՝ 50 ուսանող (13,8%), բանավեճերի մեթոդը կարևորել է 230 ուսանող (63,5%), դերախաղերինը՝ 98 ուսանող (27,1%): 1 ուսանող (0,3%) նշվածներից ոչ մի մեթոդ օգտակար չի համարել, ևս 9 ուսանող (2,5%) այլ մեթոդներ են առաջարկել. տե՛ս գծապատկեր 7.):


Գծապատկեր 7.



Հատկանշական է, որ ուսանողները դեմ առ դեմ անհատական և խմբային աշխատանքները նախընտրում են բջջային հեռախոսների կիրառմամբ անհատական ու խմբային ախատանքներից: Սա կարող է պայմանավորված լինել


կամ դասախոսների մի մասի կողմից բջջային հեռախոսների կիրառմամբ վարժություններ չանելով, կամ, որ ավելի հավանական է, անմիջական շփումները նախընտրելով: Այդուհանդերձ ակնառու է, որ վերապատրաստված դասախոսների կողմից նորարարական մեթոդներով դասավանդումը նպաստում է ուսանողների մոտ խմբային աշխատանքի և համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այդ մասին են վկայել հարցված ուսանողների մոտ 90%-ի տված պատասխանները (**«Դասընթացի արդյունքում ձեռք եմ բերել խմբային աշխատանքի և համագործակցային կարողություններ, որոնք կկարողանամ կիրառել հետագայում»** պնդմանը լիովին համաձայն է եղել 229 ուսանող (63,3%), համաձայն է եղել 85 (23,5%) ուսանող, մասամբ համաձայն է եղել 23 ուսանող (6,4%), համաձայն չի եղել 9 ուսանող (2,5%), բոլորովին համաձայն չի եղել 14 ուսանող (3,7%): Պնդմանը դժվարացել է պատասխանել 2 ուսանող (0,6%). տե՛ս գծապատկեր 8.):

Գծապատկեր 8.




Տրամաբանական է, որ ուսանողների ճնշող մեծամասնությունը պետք է ցանկություն հայտներ, որ մյուս դասախոսները ևս դասավանդման մեջ կիրառեն ակտիվ ու համագործակցային աշխատանք ենթադրող նորարարական մեթոդները: Այդ ցանկությունը հստակ դրսևորվել է հարցվածների մոտ 90%-ի մոտ (**«Կցանկանայի՞ք արդյոք, որ Ձեզ դասավանդվող մյուս դասընթացները նույնպես իրականացվեին նման մեթոդներով ու մոտեցումներով»** հարցին «միանշանակ այո» պատասխանն է տվել 212 ուսանող (58,6%), «ավելի շուտ՝ այո» պատասխանել է 114 ուսանող (31,5%), «ավելի շուտ՝ ոչ» է պատասխանել 15 ուսանող (4,1%), «միանշանակ ոչ» է ասել 7 ուսանող (1,9%): Եվս 14 ուսանող (3,9%) դժվարացել է պատասխանել հարցին. տե՛ս գծապատկեր 9.):

Գծապատկեր 9.



Ավելացնենք, որ հարցված ուսանողների մեծագույն մասի վերաբերմունքը վերապատրաստված դասախոսների վարած դասընթացների կապակցությամբ աչքի են ընկնում դրական բնութագրումներով (*Դասընթացներն ընդհանուր առմամբ օգտակար է համարել 269 ուսանող (74,3%), կիրառական՝ 195 ուսանող (53,9%), հետաքրքիր է համարել 274 ուսանող (75,7%), մոտիվացնող՝ 200 ուսանող (55,2%), ներգրավող է բնութագրել 184 ուսանող (50,8%), անհրաժեշտ է որակել 215 ուսանող (59,4%): Դասընթացը դժվար ընկալելի է համարել 11 ուսանող (3%), ձանձրալի՝ 6 ուսանող (1,7%): Դասընթացը հոգնեցնող է եղել 11 ուսանողի (3%) համար, անօգուտ՝ 5 ուսանողի (1,4%) համար և անհետաքրքիր՝ 6 ուսանողի (1,7%) համար: 8 ուսանող էլ (2,2%) դժվարացել է պատասխանել. տե՛ս գծապատկեր 10.):*

Գծապատկեր 10.



Դասընթացներն առավել արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու հարցում ուսանողների մատնանշած առաջարկությունների մեծ մասը կրկին ենթադրել են ակտիվ ու համագործակցային բաղադրիչով գործողություններ՝ մանկավարժական նորարարական մոտեցումների և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ (դասընթացներն առավել արդյունավետ, ակտիվ և հետաքրքիր դարձնելու տեսանկյունից եղել են հետևյալ առաջարկները (ներկայացնում ենք ընդհանրացված տեսքով).

- ավելի շատ ժամաքանակ հատկացնել դասընթացին,
- մեծացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները,
- մեծացնել դասընթացների պրակտիկ բաղադրիչները,
- ավելի հետևողական աշխատանքներ տանել ուսանողների մոտիվացիան բարձրացնելու ուղղությամբ,
- ավելացնել խմբային աշխատանքները, դերախաղերը, հարցուկատասխան-քննարկումները, փոքրիկ հետազոտական աշխատանքները,
- կազմակերպել առցանց բանավեճեր և քննարկումներ,
- դասերին ավելի շատ կատարել առաջադրանքներ,
- բարելավել տեխնիկական պայմաններ (վիզուալ միջոցներ, պրոյեկտոր և այլն),
- ավելացնել թեմատիկ ֆիլմերի դիտումները,
- կազմակերպել թեսթային հարցումներ խաղերի տեսքով,
- ավելացնել քննարկումները՝ բջջային հեռախոսների օգտագործմամբ:):

Այս ամենն ապացուցում է PRINTeL նախագծի նպատակադրման ճշմարտացիությունը, որ բուհերում պետք է տարածվի ակտիվ ու նորարական մեթոդներով դասավանդումը: Դա, իհարկե, կապված է որոշ դժվարությունների հետ: Ակտիվ, համագործակցային ու նորարարական դասավանդումն ու ուսումնառությունը ենթադրում են ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ լուրջ և հիմնարար աշխատանքներ: Դա վերաբերում է դասասենյակների կահավորմանը, սարքավորումների ձեռքբերմանը և գործարկմանը և այլնին: Մյուս դժվարությունն առնչվում է մեծ թվով դասավանդողների համապատասխան մանկավարժական ու թվային հմտությունների ուսուցմանը: Այդուհանդերձ այն հանգամանքը, որ շահագրգիռ ամենակարևոր խումբը՝ ուսանողությունը, մեծ խանդավառություն է դրսևորում ուսումնառության գործընթացում ակտիվ և նորարարական մանկավարժական ու թվային մոտեցումների կիրառման առնչությամբ, խոսում է ընտրված ուղու ճշմարտության մասին:

Եզրակացություն:

Ելնելով վերը կատարված վերլուծությունից և ուսանողների հարցումների անմիջաբար դիտարկումից՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- PRINTeL նախագծի շրջանակներում վերապատրաստված դասախոսների յուրացրած թվային ու մանկավարժական հմտությունների կիրառումը դասավանդման և ուսումնառության գործընթացներում էապես բարձրացնում է կրթության որակը, հասանելիությունն ու մատչելիությունը:
- Վերապատրաստված դասախոսների՝ վերջին ուստարում վարած դասընթացներին մասնակցած ուսանողներն ընդգծված դրական վերաբերմունք ու խանդավառություն են դրսևորում ակտիվ ու նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման փաստի առթիվ՝ արժևորելով այն ինչպես ուսումնառության դյուրացման, այնպես էլ մոտիվացիայի բարձրացման և ընդհանրական կարողությունների ձևավորման առումներով:
- Վերապատրաստված դասախոսները պատշաճ չափով կիրառում են այդ վերապատրաստումների արդյունքում յուրացրած մոտեցումներն ու մեթոդները, որոնց կիրառումը, այդուհանդերձ, սահմանափակվում է դասախոսների չափազանց մեծ ուսումնական բեռնվածության, լսարանային ենթակառուցվածքի անհարմարության, համապատասխան տեխնիկայի պակասով, դասախոսների թվային հմտությունների ոչ գոհացուցիչ մակարդակով և այլն:

Վերոնշյալ եզրահանգումների հիմքում ընկած վերլուծության առանձին մասերից կարելի է բխեցնել նաև հետևյալ եզրակացությունները.

- վերապատրաստված դասախոսների վարած դասընթացները, անկախ դրանց կազմակերպման ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական պարապմունք), չեն անցել դասախոսի մոնոպոլ դերով, մենախոսությամբ. դրանց բնորոշ է եղել ուսանողների նշանակալի ներգրավվածությունը:
- Վերապատրաստված դասախոսների կողմից կիրառված դասավանդման և ուսումնառության մեթոդները **խթանել** են ուսանողների **ուսումնառությունը խթանելու գործում**:
- Վերապատրաստված դասախոսները մեծապես խրախուսել են դասընթացներին ուսանողների մասնակցությունը, ակտիվ ներգրավվածությունը:
- Վերապատրաստված դասախոսները բավական հաճախակի են դասավանդման մեջ կիրառել ակտիվ և նորարարական մեթոդներ, ինչի առնչությամբ ուսանողների բավարարվածությունը բարձր է:
- Ուսանողները միանգամայն բավարարված են վերապատրաստված դասախոսների հետ հաղորդակցության գործընթացի արդյունավետությունից:
- Վերապատրաստված դասախոսների վարած դասընթացները էապես նպաստել են ուսանողների մոտ խմբային աշխատանքի և համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:
- Դասընթացներին մատուցվող նյութը յուրացնելու տեսանկյունից ուսանողները նախընտրում են ուսումնառության ակտիվ և նորարարական հետևյալ մեթոդները. խմբային քննարկում-մտազրոհներ, խմբային նախագծեր, բանավեճեր, դերախաղեր, անհատական նախագծեր/աշխատանքներ, անհատական հարցումներ:
- Վերապատրաստված դասախոսների կողմից ակտիվ ու նորարարական մեթոդներով ու մոտեցումներով դասավանդումը ուսանողները համարել են օգտակար, կիրառական, հետաքրքիր, ներգրավող, մոտիվացնող, անհրաժեշտ: Մեծ է նրանց ցանկությունը՝ մյուս դասախոսների կողմից ևս նշված մեթոդներն ու մոտեցումները կիրառելու հարցում:

Չետագա անելիքների ուղենիշներ:

Սույն զեկույցի շրջանակներում ներկայացված տվյալների, կատարված վերլուծության ու եզրահանգումների արդյունքում կարելի է ուրվագծել հետագա անելիքների որոշ ուղենիշներ.

- Նկատի ունենալով, որ PRINTeL նախագծի շրջանակներում վերապատրաստված ԵՊՀ դասախոսները, յուրացրած ընդհանուր մոտեցումներից զատ, ձեռք են բերել նաև ակտիվ և համագործակցային ուսումնառության տարբեր մեթոդական գործիքներ, ինչը, մասնավորապես երևում էր նաև հարցված ուսանողների պատասխաններում, կարևոր ենք համարում **վերապատրաստված դասախոսների` միմյանց միջև փորձի փոխանակման միջոցառման կազմակերպումը**: Դա կնպաստի, որ յուրաքանչյուր դասախոս փոխառի նոր մոտեցում կամ մեթոդ, որով ինչպես կհարստացնի դասավանդման սեփական հմտությունների բազան, այնպես էլ կկիրառի դրանք գործընկերների հետ անցկացվելիք վերապատրաստման դասընթացներում:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ-ում դասավանդման որակի վերաբերյալ ուսանողական հարցումները չեն արտացոլում ակտիվ ու նորարարական բաղադրիչով, համագործակցային ուսուցման գնահատումը, գտնում ենք, որ **սման հարցումներ պետք է անցկացնեն նաև PRINTeL նախագծի շրջանակներում վերապատրաստված ԵՊՀ դասախոսների կողմից վերապատրաստված և կրեդիտ ձեռք բերած գործընկերներ դասախոսները`** որպես որակի ապահովման կարևոր գործիք:
- Հաշվի առնելով, որ, ամենայն հավանականությամբ, ԵՊՀ վերապատրաստող և վերապատրաստված դասախոսները (կամ նրանց մեծագույն մասը) իրենց դասընթացների ծրագրերը չեն վերակառուցել, վերաշարադրել համաձայն ակտիվ, նորարարական ու համագործակցային ուսումնառության մոտեցումների, գտնում ենք, որ անհրաժեշտ է **խրախուսել դասընթացների ծրագրերի վերակառուցումը, դրանց դասավանդման մեթոդական ուղեցույցների ստեղծումը**:
- Հետագայում ակտիվ, նորարարական և համագործակցային մոտեցումներով դասավանդման կարողությունների վերաբերյալ պահանջների ներդրումը կրթական ծրագրերի մասնագրերում, և, անհրաժեշտության դեպքում, դասախոսների ընտրության ընթացակարգերում, կարծում ենք, էապես կնպաստի որակի մշակույթի զարգացմանը ԵՊՀ-ում: